



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

04 ապրիլի 2019 թվականի թիվ 37-Ս

ք. Երևան

«ՄԻՐԱԿ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2019 թվականի փետրվարի 27-ին հարուցված թիվ 5 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով 2019 թվականի փետրվարի 27-ին «ՄԻՐԱԿ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Ընկերության կողմից 2018 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև 31-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակված եթերի ձայնագրությունները չներկայացնելու հիմքով:

Ընկերության կողմից 2019 թվականի փետրվարի 5-ին Հանձնաժողով ներկայացված գրավոր բացատրությամբ նշվում է, որ 2018 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև 31-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակված եթերի ձայնագրությունները չեն ներկայացվել, քանի որ տեխնիկայի խափանման պատճառով չեն պահպանվել հեռարձակված եթերի ձայնագրությունները: Ընկերությունը պարտավորվում է վերականգնել հեռարձակված եթերի ձայնագրությունները և ներկայացնել Հանձնաժողով:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Ընկերության կողմից ներկայացվել է վնասված կրիչը, որից հնարավոր է եղել վերականգնել 2018 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև 31-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակված եթերի ձայնագրությունների մի մասը:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հեռուստառադիոընկերությունները պարտավոր են պահպանել իրենց հեռարձակած հաղորդումների տեսագրություններն ու ձայնագրությունները՝ հեռարձակման օրվանից սկսած մեկ ամիս ժամկետով:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մեկ ամիսը լրանալուց հետո հեռուստառադիոհաղորդումների տեսագրությունները և ձայնագրությունները կարող են ջնջվել, եթե այդ ընթացքում հաղորդումներում տեղ գտած տեղեկությունների հերքման կամ այլ վիճելի հարցերի վերաբերյալ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ, Հանձնաժողով կամ հեռուստառադիոընկերություններ դիմում կամ բողոք կամ դատարան հայց չի ներկայացվել: Նշված ձայնագրություններն ու տեսագրությունները կարող են չպահպանվել վիճելի հարցերի լուծումից հետո:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, լիցենզիայի պայմանների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների կրկնակի դեպքեր հայտնաբերելու և դրանց մասին Հանձնաժողովին գրավոր տեղեկացնելու դեպքում Հանձնաժողովը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, Հանձնաժողովն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների կրկնակի դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած հեռուստառադիոընկերությանը՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 5-րդ մասերով, 58-րդ հոդվածի 1-ին մասով, 59-րդ հոդվածով սահմանված դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. «ՄԻՐԱԿ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ գրավոր նախազգուշացում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՄԻՐԱԿ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

04 ապրիլի 2019թ.

ք. Երևան